ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» նոյեմբերի 2018 թվականի N: 365-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման» կարգի 8-րդ կետի 2-րդ ենթակետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի գնահատման, ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու 2019 թվականին իրականացվելիք աշխատանքների ընդունման նպատակով ձևավորել մասնագիտական խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Մասնագիտական խմբին վերապահել պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2018 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 365-ա որոշման

ԿԱԶՄ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ

Ալբերտ Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, ղեկավար,

Մկրտիչ Ասատրյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ:

Հուրիկ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,

Կարինե Սերոբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ, անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Տ. ՂԱՐԻԲՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է